TALK
(ԽՀՊԱ)
Նախագիծ

Երեխաներին Անվտանգ Պահելու Ուղեցույց

Խոսե՛ք Ձեր երեխաների հետ հրազենի մասին

Հարցրե՛ք Ձեր ընտանիքի անդամներին, ընկերներին եւ հարեւաններին, թե արդյո՞ք նրանց զենքերը փակի տակ են

Պահե՛ք Ձեր զենքերը ապահով եւ անվտանգ վայրում

Անվտանգ պահե՛ք մեր երեխաներին եւ մեր համայնքները

WAGV
WOMEN AGAINST GUN VIOLENCE

2013 թ. Միացյալ Նահանգներում ամեն ամիս 12 տարեկանից ցածր ավելի քան 5 երեխաներ սպանվել են ընտանիքի անդամներից կամ ընկերներից մեկի տան հրազենից, որոնք սխալ կերպով են պահվել եւ պահպանվել. դա կազմում է շաբաթական 1-ից ավելի երեխա:

Այդ բոլոր մահերից կարելի էր խուսափել:

Թրինիթին 4 տարեկան էր, երբ 2013 թ. Հունվարի 10-ին 6 տարեկան մեկ այլ տղան հյուրասենյակի աթոռի վրա գտել էր լիցքավորված հրացանը եւ ոչ միտումավոր սպանել էր նրան:

Էլիսիան 6 տարեկան էր, երբ 2013 թ. Հունիսի 30-ին նրա 4 տարեկան եղբայրը գտել էր իրենց պապիկի լիցքավորված ատրճանակը եւ ոչ միտումավոր սպանել էր նրան:

Բրենդոնը 6 տարեկան էր, երբ 2013 թ. Ապրիլի 8-ին նրա 4 տարեկան հարեւանը իրենց տանը գտել էր լիցքավորված հրացանը եւ ոչ միտումավոր սպանել էր նրան:

Իսկ Էլլան 3 տարեկան էր, երբ 2013 թ. Սեպտեմբերի 7-ին իր հոր կողմից լիցքավորված եւ անապահով թողնված ատրճանակից ոչ միտումավոր սպանել էր ինքն իրեն:



Խոսե՛ք Ձեր երեխաների հետ հրազենի մասին:

Որպես ծնող եւ խնամակալ միայն Դու՛ք եք կրում պատասխանատվություն Ձեր երեխաների եւ Ձեր խնամքի տակ գտնվող երեխաների անվտանգությունը ապահովելու համար:

Ֆիլմերում, հեռուստացույցով եւ կոմպյուտերային խաղերում երեխաները տեսնում են կրակող զենքերի հզորությունը: Իսկ այն, ինչ այդ ծրագրերը չեն ցույց տալիս, դա զենք օգտագործելու հետեւանքներն են՝ վնասվածքները, մահերը եւ սիրելիին կորցնելու ցավը: Բացատրե՛ք Ձեր երեխաներին լրատվամիջոցներում ցուցադրվող զենքերի եւ այն զենքերի միջեւ տարբերությունը, որոնք իրական կյանքում ազդեցություն են գործում իրական մարդկանց վրա:

Դա Ձե՛ր պարտականությունն է, որպեսզի օգնեք երեխաներին հասկանալու, որ զենքերը իրական են եւ կարող են լուրջ վնաս հասցնել կամ սպանել մարդկանց:

Զենքերի մասին զրույցները մի սահմանափակեք մեկ անգամով:

Երբ երեխաները սկսում են հասունանալ, նրանց կարծիքը զենքերի մասին կարող է փոփոխվել. անպայման պարբերաբար խոսեք նրանց հետ հրազենի վտանգների մասին: Թեմա բացեք՝ քննարկելով նոր պատմություններ, որտեղ երեխաները եւ երիտասարդ մարդիկ վնասվել են զենքի դաժանության պատճառով: Եւ Ձեր երեխաների հետ անկեղծ եղեք՝ անկախ նրանց տարիքից: Համոզվեք, որ նրանք հասկանում են, որ զենքը կարող է սպանել:

Հարցեր, որոնք Դուք կցանկանաք բացահայտել Ձեր երեխաների հետ.

- Արդյոք նրանք ճանաչու՞մ են կամ լսե՞լ են որեւէ մեկի մասին, ում կրակել են:
- Արդյոք նրանք դպրոցում ճանաչու՞մ են այնպիսի երեխաների, ովքեր ունեն զենք կամ ընդգրկված են եղել որեւէ բռնի գործողության մեջ:
- Ի՞նչ կարծիք ունեն զենքերի մասին: Արդյոք նրանք տեսե՞լ են իրական զենք:
- Որոշ զենքեր նման են խաղալիքների, եւ որոշ խաղալիքներ նման են իրական զենքի: Արդյո՞ք նրանք կարող են դրանք տարբերակել, քանի որ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մինչեւ ութ տարեկան որոշ երեխաներ կարողանում են դրանք տարբերակել:

Շատ կարեւոր է, որ Դուք խոսեք Ձեր երեխաների հետ զենքերի մասին, անկախ նրանից, թե որտեղ եք ապրում, թե ինչ դպրոց են հաճախում Ձեր երեխաները, եւ, թե ովքեր են Ձեր երեխաների ընկերները: Զենքերի դաժանությունները ամեն տարի ազդում են Միացյալ Նահանգների գրեթե բոլոր համայնքներին:



Ահա՛, թե ինչ պետք է ասեք երիտասարդ երեխաներին.

Եթե Ձեր ընկերոջ տանը զենք տեսնեք, ապա.

- Հեռու՛ մնացեք զենքից. ՁԵՌՔ ՉՏԱ՛Ք ԴՐԱՆ:
- Այդ մասին հայտնեք չափահաս մեկին:
- Զանգահարեք Ձեր ծնողին եւ/կամ գնացեք տուն:

Եթե Դուք տանն եք եւ լսում եք զենքի կրակոցներ, ապա.

Կախեք Ձեր գլուխը եւ ծածկվեք:

- Հեռու մնացեք պատուհաններից:
- Սպասեք, մինչեւ օգնությունը ժամանի:
- Եթե օգնությունը չժամանի, ապա զանգահարեք 911:

Դուք կարող եք երիտասարդ երեխաներին սովորեցնել այս խոստումը.

«Եթե ես տեսնեմ զենք կամ ցանկացած իր, որը նման է զենքի, ապա ես դրա մասին կհայտնեմ չափահաս մեկին, քանի որ զենքերը կարող են վնասել կամ սպանել ինձ, իմ ընկերներին եւ իմ ընտանիքին»:

Լսե՛ք Ձեր երեխաներին:

Հաճախ դժվար է զրուցել երիտասարդների հետ ցանկացած թեմայի շուրջ, հատկապես այնպիսի կարեւոր թեմայի շուրջ, ինչպիսին հրազենային բռնությունն է: Ահա՛ որոշ խորհուրդներ, որոնք կարող են Ձեզ օգնել.

- Եղեք համբերատար:
- Լսե՛ք: Անգամ, եթե դա Ձեզ դուր չի գալիս, ստիպեք Ձեզ ամբողջովին ավարտել զրույցը:
- Թող նրանք իմանան, որ Դուք միշտ պատրաստ եք նրանց լսել, եւ նրանք վտանգի չեն ենթարկվի, եթե Ձեզ դիմեն որեւէ հարց կամ խնդիր ունենալու դեպքում:
- Հետեւեք, թե նրանց ինչն է հետաքրքրում հեռուստատեսությամբ, ֆիլմերում, կոմպյուտերային խաղերում եւ համացանցում: Եթե որեւէ բան Ձեզ անհանգստացնի, ապա դա ներկայացրեք նրանց ուշադրությանը:
- Նրանց հետ խոսեք մարդկային կյանքի արժեքի մասին:Բացատրեք, թե ինչպիսի զգացողություն կունենաք Դուք, եթե նրանց հետ ինչ որ մի բան պատահի:



Հարցրեք ընտանիքի անդամներին, ընկերներին եւ հարեւաններին, թե արդյո՞ք նրանց զենքերը փակի տակ են:

Մինչ Դուք թույլ կտաք Ձեր երեխային խաղալ իր ընկերոջ տանը, հարցրեք նրա ծնողներին, թե արդյո՞ք նրանք տանը զենք ունեն, եւ արդյո՞ք այն ապահով վայրում է գտնվում. նույն կերպ Դուք պետք է հարցնեք լողավազանի շուրջ ցանկապատի կամ չվարժեցված շան գոյության

մասին: Տանը, պահարանի մեջ, մահճակալի տակ, զզրոցի մեջ կամ որեւէ այլ տեղ զենք պահելը դեռ բավական չէ երեխաներին անվտանգ պահելու համար:

Զենքերը պետք է պահվեն.

- Ոչ լիցքավորված վիճակում: Զենքերը կարող են թվալ ոչ լիցքավորված, սակայն դեռեւս մեկ փամփուշտ կարող է մնացած լինել պալատում:
- Կողպված ձգանով կամ զենքի կողպեքով, կամ պահված լինեն արգելափակված տուփի մեջ, որոնք հասանելի չեն կարող լինել երեխաներին:
- Փամփուշտներից առանձին:

12 տարեկանից ցածր երեխաներ ունեցող ընտանիքների մոտավորապես 29%-ը զլանում են փակի տակ պահել իրենց զենքերը:

– Մանկաբուժության եւ Դեռահասների Բժշկության Արխիվ (2006)

Եթե որեւէ կասկած ունեք մեկ այլ տան անվտանգության մասին, ապա թույլ մի տվեք, որպեսզի Ձեր երեխաները այնտեղ խաղան: Փոխարենը՝ երեխաներին հրավիրեք Ձեր տանը խաղալու:

Ահա որոշ գաղափարներ AskingSavesKids.org կայքից, թե, ինչպես զրույց ծավալել հարեւանների, ընկերների եւ ընտանիքի անդամների հետ, ՄԻՆՉ Դուք թույլ կտաք Ձեր երեխաներին այցելել կամ խաղալ նրանց տներում:

«Հուսով եմ՝ դեմ չեք լինի, եթե ես Ձեզ մի քանի հարց տամ երեխաների անվտանգության մասին...»

«Դուք հիշու՞մ եք այն երեխաների մասին ողբերգական պատմությունը, ովքեր զենք էին գտել...»

«Մենք բոլորս քաջ տեղյակ ենք, թե որքան հետաքրքրասեր կարող են լինել երեխաները...»

Պահեք Ձեր զենքերը ապահով եւ անվտանգ վայրում:

Զենքերը հրապուրում են երեխաներին:

Գոյություն չունի նման գաղափար, ինչպիսին է անվտանգ, լիցքավորված զենքը, հատկապես, երբ մոտակայքում կան երեխաներ: Հիշեք ինքներդ Ձեզ, երբ Դուք էիք երեխա: Դուք միշտ գտնում էիք թաքնված նվերներն ու ընծաները: Եւ, եթե Ձեր ընտանիքում կար զենք, ապա Դուք նույնպես գիտեիք, թե այն որտեղ է գտնվում: Զենքերը այնքան հեշտ են կիրառվում, անգամ երկու տարեկան երեխաները պատահաբար կրակել եւ սպանել են իրենց խաղընկերներին:

ՀԻՇԵ՛Ք. Շատ նահանգներում զենք ունեցող մարդիկ պատասխանատու են երեխաների կողմից իրենց զենքը կիրառելու համար՝ զենքերը համապատասխան ձեւով չպահելու դեպքում:

- Ըստ 2014 թ. տվյալների, Կալիֆորնիան գանկացած մեկին կարող է ենթարկել քրեական պատասխանատվության, եթե նրանք իրենց տարածքում անփութորեն պահեն կամ դրսում թողնեն ցանկացած լիցքավորված հրազեն, որը երեխան մեծ հավանականությամբ կարող է ձեռք բերել՝ անկախ նրանից, թե արդյո՞ք երեխան զենքը դուրս կբերի հանրային միջավայր, թե ոչ:

- Ծնողը կամ խնամակալը կարող են նաեւ երթարկվել քաղաքացիական պատասխանատվության այն փասսերի համար, որոնք կհասցվեն տվյալ անձնավորության երեխայի կամ խնամառուի կողմից: Այդ փասսերը կարող են հասնել մինչեւ $30,000-ի՝ յուրաքանչյուր տուժածի համար, իսկ ընդհանուրը՝ մինչեւ $60,000-ի:

Անվճար զենքի կողպեք կարող եք պահանջել՝ էլ. նամակ ուղարկելով wagv@wagv.org հասցեին:

Ուսումնասիրությունները ցույց ենք տալիս, որ զենքերը փակի տակ եւ ոչ լիցքավորված պահելը նվազեցնում է փսասվածքների եւ ինքնասպանությունների վտանգը մոտավորապես 70%-ով:– Ամերիկյան Բժշկության Ասոցիացիայի Ամսագիր (2005)

Մանկաբուժության Ամերիկյան Ակադեմիան խորհուրդ է տալիս, որ ընտանիքի համար ամենաանվտանգ տունը՝ դա այն տունն է, որտեղ չկա զենք: Եթե տանը կա զենք, ապա այն պետք է պահվի ոչ լիցքավորված վիճակում եւ փակի տակ, իսկ փամփուշտները պետք է պահվեն առանձին:

– Մանկավարժության Ամերիկյան Ակադեմիայի Քաղաքականության Հայտարարությունը. Հրազենի պատճառով ստացված վնասվածքները մանկահասակ բնակչության շրջանում (2012 թ. Հոկտեմբեր)

Մի հանրային առողջապահության ուսումնասիրություն բացահայտել է, որ 8-ից 12 տարեկան տղաների 1/3-ը ոչ լիցքավորված ատրճանակ գտնելով՝ վերցրել է զենքը եւ քաշել ձգանը:– Դոկտոր Արթուր Քելլերմանի Ուսումնասիրությունները՝ հրապարակված Մանկաբուժության վերաբերյալ (2001 թ. Հունիսի 1)

Երեխաների 22%-ը, ովքեր ապրում են մի տան մեջ, որտեղ կա զենք, ձեռք են տվել այդ զենքին՝ առանց իրենց ծնողների իմացության:

– Երեխաների եւ Հրազենի Մասին Սխալ Պատկերացում. Մանուկների եւ Դեռահասների Բժշկության արխիվներ (2006)

Անվտանգ պահեք մեր երեխաներին եւ համայնքները:

Հիշե՛ք.

- Խոսե՛ք Ձեր երեխաների հետ հրազենի մասին
- Հարցրե՛ք Ձեր ընտանիքի անդամներին, ընկերներին եւ հարեւաններին, թե արդյո՞ք իրենց զենքերը փակի տակ են
- Պահե՛ք Ձեր զենքերը ապահով եւ անվտանգ վայրում
- Անվտանգ պահե՛ք մեր երեխաներին եւ մեր համայնքները

Երեխաների շրջանում ոչ միտումավոր հրազենային մահերի կեսը պատահում է տանը, եւ գրեթե կեսը՝ պատահում է ընկերոջ կամ հարազատի տանը:

– Ոչ միտումավոր հրազենային մահեր. Մեկ ուրիշի կողմից հասցված եւ ինքնուրույն հասցված կրկոցներ: Դժբախտ Պատահարների Վերլուծություն եւ Կանխարգելում (2010).

TALK
(ԽՀՊԱ)
Նախագիծ

WOMEN
AGAINST
GUN
VIOLENCE

Women Against Gun Violence
10401 Venice Blvd.
723
Los Angeles, CA 90034
հեռ. 310.204.2348
կայք. www.wagv.org
էլ. հասցե. wagv@wagv.org

Վերափոխված հրատարակություն, 2015 թ.
Գրքույկը նախագծված է Asylum Design &
Marketing, Inc.-ի կողմից
Թարգմանությունը՝ Նազելի Գամիտյանի